



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրել նյութը ցույկացած ձևավայրով կամ կրկնով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առնդժու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ա. Խ. Հ.

Լաւստողկոմատի Սոցիալական Դաստիարակության Գլխավոր Վարչության Մանկավարժական Կենտրոնական Թանգարան—№ 1.

Պըսլետարներ բայր յերկրների, միացեք!

# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՀԵՐԲԱՐԻՈՒՄ

Հայ Նիկոնովի կազմից Ա. ԱԾինեղ. Յանձնական



Պետական Հրատարակություն—№ 32.

ՏԵՐԵ Ա. 1922.

ՀՀ Ապահովագույն



թ. զ. գ.

Ճ  
Հ  
Յ  
Շ

Լուսնադիմատի տպարան Վահակը ապատում

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՀԵՐԲԱՐԻՈՒՄ<sup>1)</sup>

ՀԵՐԲԱՐԻՈՒՄ ԿԱԶՄԵԼԸ ԸՍՏ ԲՈՒՍԱԿԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ<sup>2)</sup>

Մի վորեև վայրիբուսականությունը հավաքելու համար ավելի հարմար է ձգտել վոչ թե այդ վայրի բոլոր բույսերը հավաքելու, այլ ավելի նողատակահարժար է կազմել մի վորոշ բուսական ձեավորման հերթարիում։ Վորովհետեւ, յեթե ձգտում ենք հավաքել բոլոր բույսերը, առհասարակ հերթարիումի մեջ ընկնում են միմիայն միատեսակ, վայրը բոլորովին չընորոշող և պատահական բույսեր։ Բուսական ձեավորում կոչվում են այն բույսերը, վորոնք աճում են միանման բնության պայմանների մեջ։ որինակ՝ բոլոր այն բույսերը, վոր աճում են անտառում, տափաստանում, ճահճում և այլն, անվանվում են բուսական ձեավորում։ Ամեն մի ձեավորում իր հերթին բաժանվում է ավելի մանր ձեավորումների և այլն։ Ներկայումս Հայաստանը ունի բուսական ձեավորումներ, վորոնցից ամենանշանավորներն են.

Մարգագետնային բուսականություն.

Տափաստանային

»

Անտառային

»

Քսերոֆիլային (չորասեր) »

Բացի այս բնական ձեավորումները, պետք է հիշեն այլք դաշտերի և պարտեզների աղբային բուսականությունը, այօլներն այն բույսերի խումբը, վորոնք աճում են վարելահողերի և առհասարակ, բոլոր մարդու ձեռքով մշակած հողերի վրա կուլտուրական բույսերի մեջ։ Վերոհիշյալ ձեավորումներից ամեն մնկը քը հերթին բաժանվում է մի շարք ավելի մանր ձեավորումների, դրանք ավելի մանր և այլն։ Որինակ՝ անտառային ձեավորումները կարելի յե բաժանել սաղարթավոր և ասկղնատերեւ անտառների ձնավորումների։ Այս վերջինները կարող են լանջի, տափառակի և բարձունքների վրա ընկած լինել, վորի հետեանքով

1) Զօրացրած բույսերի ժողովածու.

2) Թօւաբեն՝ Փօրմագլ.

կրաժանվեն լանջային, բարձունքային և տափարակային անտառների ձևավորումների և այլն:

Հերբարիում կազմելը ամենից հարմար և սկսել մարդագետնից, ճանձից, տափաստանից կամ դաշտերից և հավաքել խոտակերպ բույսեր: Նախ և առաջ պետք է ընտրել մի շրջան, վորքանկալի յե յենթարկել հետազոտության (որինակ՝ ձեր զյուղի, քաղաքի մոտերին ընկած դաշտը, մարգաղետինը կամ չճակը, պետք տփելը և այլն): Վորպեսդի այդ շրջանի բույսերից հավաքած հերբարիումը լինի: ովելի մանրամասն և լիովին, պետք է շրջանը հետազոտել հետեւյալ կերպով. ընտրած ձևավորման վրա պետք է վերցնել մի քառակուսի արշին տարածություն և այդ տարածության վրա գտնվող բոլոր բույսերը լավ հետազոտելուցհետո՝ ամեն մի տեսակից պետք է վերցնել 1—2 հատ և չորացնել: Վերցրած բույսերը պետք է անպայման վորոշել ըստ հնարավորության, յեթե չկա ձեռնարկի կամ հնարավորություն զիտական լատիներինով վորոշելու համար, գոնե պետք է անվանել տեղական ժողովրդական բարբառով: Նույն շրջանում, վորոշ տարածության վրա, որինակ ամեն մի 50 կամ 100 քայլից հետո, պետք է կտարիլ այդպիսի հետալոտություններ մի քառակուսի արշին տարածության վրա և վերցնել այն բույսերը, վոր առաջին անգամ չեն յեղել: Այդպիսի յեղանակով անցնելով հետազոտության, կարելի յե հավաքել այդ շրջանի լրակատար հերբարիումը: Միաժամանակ կարելի յե ձեռք բերիլ վորոշ փորձառություն նկատելու համար այն բույսերը և բույսերի այն հասկությունները, վորոնք սովորական ժամանակ աչքի չեն ընկնում և, հավանական և, թեթե կերպով հայելիս, յերբեք չեն նկատվի:

Հովիաքելով այդպիսի հերբարիում ըստ ձևավորումների, որինակ, մարգաղեանի բույսերից. հարկավոր և աչալուրջ լինել բոլոր այն երևոյթների նկատմամբ, որոր կապված են բույսերի տարածման յեղանակի հետ, պետք է ուշք դարձնել նրանց բարձրության, հասակի վրա, ցածի հարկը, այսինքն խոտի կենդանի ծածկոցը բաղկացած և մամուռներից (մասսմբ) և միքանի բույսերի վարդակերպ դաստիգամած հարաբիմատային տերեններից, որինակ, յերկուուն անմեռուկից (Gnaphalium dioicum) և այլն: Յերկրորդ հասակը կազմում են ցածրահասակ խոտակերպ բույսեր, որինակ, յերիշուկի (Rygethrum) զանազան տեսակներ, բժեկական նվթաշխատ կամ տեխտուս (Eryhrasia officinalis) և այլն: Յերրորդ հասակը, վոր առասարակ կոչվում է վերին խոտ, բաղկացած և խոտազգիներից (Gramineae) և ուրիշ բարձրահասակ բույսերից:

որինակ, մոնր քրիզուլից (Rumex acetosa), ավելուկից (Rumex patientia), սպիտուկ մարգարտածաղկից (Chrysanthemum leucanthemum) և այլն։ Վերջապես, մի քանի մարգաղետիններ կարող են ունենալ նայե չորրորդ հարկ. բազկացած թռփերից։ Բացի վերոհիշյալ հարկերից շատ մարգաղետիններ կարող են ունենալ բարձրահասակ բույսեր, վորոնք առանձին—առանձին ընկած, կուցե չկազմին ինքնուրույն հարկ, բայց դրանց ես պետք ե առանձնացնել վորոշ խմբում, որինակ, զանազան տեսակի տատասկափուչեր (Gardens) տերեկիուկի (Centaurea) միքանի տեսակներ, բարդածաղիկների (Compositae) և հովանոցավորների (Umbelliferae) զանազան տեսակներ։

Հստ բուսական ձևավորումների հերբարիում կազմելիս անհրաժեշտ է անպայման հավաքել և զետեղել հերբարիումի մեջ բույսերը արմատներով<sup>1)</sup>, ծաղիկներով, տերևներով և սլառողներով։ Յեշե բույսելը հավաքելիս այդ բոլոր գործարանները նրանց վրա չենք դժոնում, անհրաժեշտ է այդպիսի բույսերը լրացնել տարվա մյուս չեղանակին, որինակ դարնան հավաքած բույսին, վոր ունի միայն ծաղիկ, տերև և արմատ, անհրաժեշտ է ամառը կամ աշնանը, պաղարերության ժամանակ. ավելացնել մի պտղատոռինակ ևս։ Բազմաթիվ խոտակերպ բույսեր, որինակ, խոտածաղիկները (Cruciferae), միևնույն որինակի վրա ունին միաժամանակ և դեռ չբացված ծաղիկներ և պտուղներ։ Ընդհակառակն, ծառակերպ բույսերի ծաղկելու և պտղաբերության ժամանակամիջոցը շատ յերկար է լինում։ Այդ պտղածառով անտառային ձեփակորման հերբարիում կազմելը ավելի դժվար է։ Վորպեսպիտե հերբարիումի մեջ ունենանք ծառի բոլոր մասերը, անհրաժեշտ է գարնանը վերցնել ծառի փոքրիկ ճյուղը ծաղիկներով և չորացնել։ Հետո ծառը նշան անել և, յերբ նա կծածկվի տերևներով, վերցնել նրա ճյուղը տերևով և, վերջապես, պտղաբերության ժամանակ հավաքել նայե նրա հասած պտուղներից և չորացնել քոլոր այդ մասերը միասին։ Ցանկալի յե նույե ծառի ամեն մի տեսակի հետ չորացնել նրա մատղաշ սերմից կամ պտղից բռած, բացված շաքիլներով և առաջին սովորական տերեներով ծիլը։ Շատ ծառերի մոտերին այդպիսի մատղաշ ծիլեր կարելի յե պտնել հեշտությամբ, իսկ մյուսների ծիլը կարելի յե առնը առնեցնել նրա հավաքած հասուն սերմը։

Անտառի հերբարիում կազմելիս չի կարելի առաջնորդվել այն միջոցով, վոր մենք ցույց տվինք, այսինքն, հետազոտելով մի արշին տարածության վրա գտնվող բոլոր բույսերը։ Վորպեսպի-

1) Այս գեպքաւմ ի նկատի են տանգում միայն խոտակերպ բույսերը։

անտառի ծառակերպ բուսականության համար հնարավոր լինի կազմել պարզ գաղափար, անհրաժեշտ ե ընտրել ավելի մեծ և ընդարձակ տարածություն, որինակ՝ 100-քառակուսի սաժեն, բայց անտառում այդպիսի ուղղագիծ և վրոշակի քանակությամբ տարածություն ընտրելը բավականաչափ դժվար է, այդ պատճառով անտառ ուսումնասիրելիս հարմար է վարվել հետեւյալ կերպով:

Մանենք անտառը մի վորեն ճանապարհով կամ կածանով և անցնելով դեպի խոր, նկատենք ըոլոր ծառերն ու թռիկերը աջ և ձախ մեր ճանապարհին: Հավաքելով բոլոր այդ նկատած ծառերի տեսակների ճյուղերը, անցնենք մի այլ կածան և նույն ձեռվ վարվելով, լրացնենք հավաքած հերբարիումը նոր տեսակներով, հետո անցնենք նոր կածանով և այլն և այլն, Ցեթե հնարավոր է, ավելի լավ կլինի թափանցել նույն անտառի թափութը և փնտոել նորանոր տեսակներ: Այդպիսով հնարավոր և հավաքել վորոշ անտառային ձեռվորման բավական լին հերբարիում: Անտառում ևս, ինչպես և մարդագետնում, քույսերը տարածվում են միքանի հարեւով: Նույն խոտակերպ բուսականության հարկերը, ինչպիսին մենք տեսսնք մարդագետնում, նկատվում են նայեա անտառի խոտակերպ բուսականության մեջ, անտառի յեղերքներում և միջադաշտերում: Նույնպես և անտառի ծառերը կազմում են միքանի հարկեր, և անտառի հերբարիում հավաքելիս պետք է հիշատակել, թե վոր հարկին և պատկանում չորացրած ըույսը:

Առհասարակ մի վորեն բուսական ձեռվորման հերբարիում կաղմելիս պետք է կցել հերբարիումին նայեա այդ ձեռվորման նկարագրությունը: Այդ նկարագրության մեջ ոլետք ե ցույց տրվի վայրի անունը, վորտեղից հավաքվել ե հերբարիումը (գավառ, քաղաք կամ՝ գյուղի շրջակայքը), յերկրորդ՝ պիտի նկարագրել, թե ինչ է ներկայացնում իրենից վայրը բուսականություն աճեցնելու տեսակետից. չնու և, թե նամ, կա արդյոք շրջակայքում ջուր (գետ, լիճ, առու) և ինչ հեռավորության վրա յե գտնվում, տափարակ և վայրը, թե ըլլակներով պատած, ժայռոտ կամ քարքարոտ, վոր կողմի վրա յե, նայում լանջը (յեթե հետազոտվող վայրը ներկայացնում է իրենից լանջ), ինչպես և մարդու ազդեցությունը տարածվում վայրի վրա, որինակ, մարդագետնի վրա—հունձքի ժամանակը և ծավալը, արօտատեղու—անասունների արածացնելու յեղանակը և քանակը, անտառների վերտքերյալ—ցույց տալ անտառը շահագործելու յեղանակը (կտրելու, տնկելու և այլն), և, առհասարակ,

անհրաժեշտ և նկարագրել մի վայրի համար հողի հատկությունը  
և բնագործությունը, արհեստական վոռոգումն, և այլն:

**ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՐԲԱՐԻԱԽ ԿԱԶՄԵԼԸ.**

Կարդաբանական հերբարիում, այսինքն այնպիսի հերբա-  
րիում, ուր բոլոր բույսերը դասավորված լինին կարգաբանական  
խմբերով (դասերով, ընտանիքներով, ցեղերով և տեսակներով)  
կարելի յե կազմել միայն այն դեպքում, յեթե բոլոր բույսերը  
վորոշված են: Այդ դեպքում բույսերի վորոշելը լինում է հերբա-  
րիում կազմելու բուն նպատակը: Կարգաբանական հերբարիում  
կազմելիս կարիք չկա ձգտել բոլոր ցեղերի կամ ընտանիքների  
վորքան կարելի յե շատ ներկայացուցիչներ հավաքել: Այդպիսի  
ձգտումը, ընդհակառակն, տալիս է բացասական հետևանք ու հեր-  
բարիումի մեջ ընկնում են ամենասովորական բույսեր: Նրանք  
առհասարակ հայտնի յեն և կարիք չկա վորոշելու:

Դըանք շատ՝ խիստ կերպով դանազանվում են մեկը մյու-  
սից և այդ պատճառով հեշտ և ճանաչել և հիշելը: Կարդաբանա-  
կան հերբարիում կազմելիս պետք է սովորել նկատել բույսերի  
ամենանուրը դանազանությունները և մանր նշանները: Փոքը  
նշաններ նկատելու հմտությունը խորասուզում է մեր հայացքը  
բնության մեջ, և մենք սկսում ենք նկատել ճոխություն այնտեղ,  
ուր առաջ տեսնում ենինք միայն միապազաղություն, սովորում  
ենք տեսնել բնության գեղեցկությունը այնտեղ, ուր առաջ այդ  
չեյինք նկատում:

Վորապեսզի կարողանանք հասնել հիշյալ նպատակին, պետք  
է կարգաբանական հերբարիումը սկսենք հավաքել առանձին ըն-  
տանիքներից: Ընտրեք մի վորեկ ընտանիք, վորը առանձնա-  
պես հարուստ և տեսակներով, և աշխատեք ըստ հնարավորության  
լրիվ կերպով հավաքել այդ ընտանիքի բոլոր տեսակները, վո-  
րոնք պատահում են ձեր վայրում: Բայց սկզբնական պարագա-  
մունքների համար պետք է ընտրել ավելի տեսակներով փոքրա-  
թիվ ընտանիք: այդպիսի ընտանիքները ավելի հեշտ և լրիվ  
հավաքել, այսինքն հավաքել ընտանիքի համարյա ըոլոր տեսակ-  
ները: այդպիսի ընտանիքների տեսակները համեմատաբար  
ավելի հեշտ են գանազանվում մեկը մյուսից: Դրանց վրա կա-  
րելի յե ձեռք բերել վորձառություն տեսակների տարրերու-  
թյունը նկատելու համար, վորը հետազայտմ շատ անհրաժեշտ  
կլինի ավելի բազմատեսակ ընտանիքներ ժողովելու և վորո-  
շելու համար, վորովիետե այդ ընտանիքների տեսակները տար-  
բերվում են մանր աննկատելի նշաններով:

Հերբարիում ժողովել շատ հարմար և սկսել զրտնուկների (Ranunculaceae) և վարդածաղիկների (Rosaceae) ընտանիքներից, ֆորտնուկները յերևան են պալխո գարնան սկզբներից, յերբ վոր գեռ ուրիշ ծաղիկներ շատ քիչ են. Գորտնուկների ընտանիքին պատկանում են, սողուն զրտնուկը (Ranunculus repens), դաշտային զրտնուկը (Ranunculus acris), հրավառ աղոնիսը (Adonis flammea), դեղնագույն դեղփինիոնը (Delphinium ochroleucum), հեղիքորսը (Helleborus Kochi), թզորմատ հրամուճը (Ficaria ranunculoides), բազմաբերիկ ծինողը (Caltha polypetala) արեւելյան տկոնիստոնը (Aconitum orientale), զրտնուկոզգի որոտը (Anemone ranunculoides). Վարդի պատաղիննը (Clematis vitalba) և այլն:

Համեմատաբար բազմաթիվ չե նայել վարդածաղիկների ընտանիքը, մանավանդ վոր տյդ ընտանիքի մեջ և մանում բոլորին հայտնի մեր մրգի ծտուրի խոշոր մասը, որինակ. խնձորենին (Malus silvestris), տանձենին (Pyrus communis), աւլորենին (Prunus domestica), կեռ սենիս (Cerasus avium), բալենին (Cerasus vulgaris), դեղձենին (Persica vulgaris), սելիկեվլենին (Cydonia vulgaris), ծիրանենին (Armeniaca vulgaris), նշենին (Amygdalus communis), և այլն: Նրան են պատկանում նմանապիս մուրենին (Rubus idaeus), մասրենին (Rosa canina), հազարբերյան վարդը (Rosa centifolia), խոտակերպ բույսերից—անտառի յելտգը (Fragaria vesca), մարտնունին (Potentilla) և գալլրարի (Alchemilla) շատ տեսակները:

Այս յերկու ընտանիքների բավականաչափ լրիվ հերբարիումը կազմելուց հետո ազատ կարելի յե սկսել ավելի բազմաթիսակ ընտանիքների հերբարիում կազմելը: Այդ ընտանիքները փոքրաթիվ են և բավականաչափ հեշտ են զանազանվում միմյանցից, իսկ դրանց տեսակները շատ բազմաթիվ են և դժվար տարրերվող: Այդ ընտանիքները հետեւյալներն են. թիթեռնածաղիկներ (Papilionaceae) կամ կնեպտուրներ (Leguminosae), ըրբածողիկներ (Labiatae), խոլոծաղիկներ (Scrophulariaceae), բարդ ածաղիկներ (Compositae), խոտոսգլիներ (Gramineae), կիոլերիներ (Cyperaceae):

Յերբ որ վելոչիշտալ ընտանիքների հետ ծանոթանանք մյուս ընտանիքների վորոշելը կդառնա ավելի հեշտ գործ և համագու ծաղկավոր բույսերի կարդավորման ուսումնասիրությունը այնքան ել բարդ դժվարություններ չի ներկայացնի:

Թե մի ընտանիքի ժողովելն և ուսումնասիրությունը յերբ կարելի յե համարել վերջացրած—դժվար և ասել, վորովհետեւ

վերոհիշալ ընտանիքները այնքան լայնածավալ են, բազմատեսակ (իսկ տեսակները մինչև անգամ ունին յինթատեսակներ), վորթերեւ մի ընտանիքի լրիվ հերթարիում կազմելու համար հարկավոր լինեն միքանի տասնյակ տարիներ։ Բայց այդպիսի ընդարձակ հերթարիում վոչ մասնալիտ-բուսաբանի համար կազմելու կարիք չկա։ Բավական եւ ամեն մի ցեղից զո՞ւ մի ներկայացուցիչ ժողովել իսկ այն ցեղերից, վորոնք շատ տեսակներ ունեն — միքանի տեսակներ։

Առաջին ընտանիքները մեզ գլխավորապես պիտի սովորեցնեն նմանություններ նկատել և մեր ընտանիքում զետեղել այն բույսերը, վորոնք առաջին հայացքից իջում ե, թե վոչ մի ընդհանուր կծեր չունեն, որինակ, զորանուկ ցեղը շատ տեսակներ ունի, վորոնք համեմատաբար միմյանց նման չեն. նույնպես և վարդածաղիկների մօռու ցեղը շատ տեսակներ ունի մեկը մյուսին չնմանվող։ Վարդածաղիկների ցեղերը իրարուց շատ խիստ կերպով են գանազանվում, որինակ խնձորենին և անտառի լեռնպատրի և մարտնունին, ուստի և այդ յերկու ընտանիքների հերթարիումը ժողովելիս շատ կարեու ե հավաքել բոլոր ցեղերի հերկայացուցիչներ ժողովելուց հետո ոգտակար կլիներ ընտրել մեկ (կամ յերկու, միքանի) լայնածավալ ցեղ ու ժողովել ըստ հնարավորության մեծ քանակությամբ այդ ցեղի տեսակները։

Իսկ այնպիսի ընտանիքները, ինչպիսին են խաչածաղիկների, հովանոցավորների, բարդածաղիկների ընտանիքները, պիտի սովորեցնեն մեզ՝ գլխավորապես զանտզանել հազիվ նկատվող նուրբ նշաններ, ուստի և ցեղերի առանձին հերկայացուցիչներ ժողովելուց հետո ոգտակար կլիներ ընտրել մեկ (կամ յերկու, միքանի) լայնածավալ ցեղ ու ժողովել ըստ հնարավորության մեծ քանակությամբ այդ ցեղի տեսակները։

### ԲՈՒՅՈՒԵՐ ԺՈՂՈՎԵԼԸ.

Բույսեր ժողովելիս անհրաժեշտ ե ունենալ միքանի ոժանդակիչ իրեր, առաջինը՝ բույսերը դուրս փորելու համար և յերկրորդ՝ ժողոված բույսերը կրելու համար։

Վորոնչետե համարյա թե բոլոր հերթարիումների համար պիտք ե ունենալ արմատով բույսեր իսկ շատ արմատներ նստած են լինում հողի մեջ թափականաչափ խոր, միքանիսը ունենում են հողի մեջ թաղված սոխածե ցողուններ—կոճղեսներ, ուստի հողի մեջ թաղված սոխածե ցողուններ—կոճղեսներ, ուստի մի բույսերը գետնից ժողովելու համար անհրաժեշտ ե ունենալ մի վորոնչ քրիչ փոքրիկ բահի ձեռվ։ Շատ հարմար ե այդպիսի բրիչ վորոնչ քրիչ փոքրիկ բահի ձեռվ։ Շատ հարմար ե այդպիսի բրիչ ները ամրացնել մի վորոնչ փոքրիկ ծայրի. այդ դեպքում ինչպես

փայտը, այնպես և բրիչը պիտի լինեն բավականինքնաստ ու ամուր, վորպեսզի վորելիս չկորանան, կամ կոտրվին. Փայտի մյուս ծայրը համար ե կեռել, վորպեսզի նրանով հնարավոր լինի կոացնել բարձրանիստ ճյուղերը։ Այդպիսի հատկապես շինած բրիչները կարելի յե փոխարինել սովորական բահերով։ Փոքրելու համար ծառայում են նայե մեծ գրչահատներ։

Ժողոված բույսերը կրելու համար գործ են ածվում ձեռնապայուսակներ։ Զեւնապայուսակը պետք է լինի երկարությամբ 10—12 վերշոկից վոչ պակաս։ Լավ կլինի, յեթե ունենակողքերից ու վերեկից մոմլաթի փակիչներ ե ծածկված լինի նայե մոմլաթով անձրեկից պաշտպանվելու համար։ Կրելու համար պայուսակին կարելի յե ամրացնել փոկ։

Պայուսակի մեջ դարսում են թուղթ, վորի մեջ և զետեղում են ժողոված բույսերը թեթև կերպով ուղղելով։ Յույսերն ուղղելու վրա եկակուրոյացում կարիք չեա ժամանակի կորցնել, վորովհետեւ բույսերի մեծամասնությունը ավելի հեշտ ուղղվում է միքիչ թառամելուց հետո, հետեւաբար, ուղղելը կարելի յե հետաձգել մինչե տուն վերադառնալու։ Շատ նազարե բույսերը միայն թառամած դրության մեջ դժվար են ուղղվում։ այդպիսիները անհրաժեշտ ե իսկույն եեթ ուղղել։

Յեթե ուղերվում ենք եկակուրոյացով ջրային բույսեր հավաքելու, չի խանգարիլ վերցնել այն չտփին, ինչ վոր ձեռնապայուսակն ե, բարակ տախտակ։

Ջրային բույսերից շատերը շատ նազարե են և ջրից հանելիս իսկույն եեթ կտխվում են ու դժվար են ուղղվում։ Այդպիսի բույսեր ժողովելու համար պետք է ջրի մեջ նրանց տակը տախտակ մտցնել ե, յերբ վոր բույսը կոհղմի տախտակին, պոկել ու զգուշությամբ հանել տախտակը ջրից։

Հետո ջուրը պետք է թափել տախտակից, վրան մի թերթ թուղթ դնել, սեղմել տախտակին և դարձնելով, զգուշությամբ տախտակը վերցնել, բույսը կմնա թղթի վրա։

Եկակուրոյացի համար գործ և ածվում միևնույն թուղթը, ինչ վոր և չորացնելու համար։ Յեթե եկակուրոյան կատարվում ե մեծ շրջանում, անհրաժեշտ ե բույսը վերցնելիս իսկույն եեթ գրել մի առանձին փոքրիկ թղթի վրա, թե վորտեղից է վերցրած բույսը ու այդ թուղթը բույսի հետ դնել ձեռնապայտուսակի թղթի մեջ, վորպեսզի առանձին բույսերի համար այդ տվյալները չմոռացվին։

Բույսերը ուղղելիս ոգտակար ե ձեռքի տակ ունենալ մի-

քանի փոքրիկ ծանր իրեր (շատ հարժար են արձակ կտորները),  
և նրանցով բույսի ուղղած մասերը սեղմած դրության մեջ պա-  
հել մինչև ամբողջ բույսը կուղղվի, հետո զգուշությամբ պետք է  
բույսը թղթով ծածկել ու ծանրությունները հեռացնել վրայից։  
Բույսերի մանր մասերը ուղղելու համար կարելի յե ոգտվե-  
գնդասեղներով և պինցետներով։

### ԲՈՒՅՍԵՐ ՉՈՐԱՑՆԵԼԸ.

Բույսերը հավաքված են և բերված տուն։ Հարկավոր է չո-  
րացնել։ Բույսերի չորացնելու համար գործ են ածում ընդհանրա-  
պես հասարակ թուղթ, միայն վոչ սոսնձոտ։ Ամենալավը համար-  
վում է ծծողական թուղթը, բայց կարելի յե գործ ածել նայե-  
լու պաղքային թուղթ, թեյե վերջինում ավելի դանդաղ են չորացնում-  
բույսերը։ Չորացնելու թղթի ծավալը պետք է լինի ապագա  
հերթարիումի ծավալի չափ։ Բույսը չորացնելու համար վերցնենք  
մեկ, յերկու կամ ավելի թղթի թերթեր, նայած բույսի հաստու-  
թյանը։ Բույսը դնենք թերթի մեջ և սկսենք ուղղել, մինչև վոր-  
բոլոր մասերը կստանան ըստ հնարավորության բնական գիրք։  
Յեթե բույսը թղթի թերթից ավելի մեծ է, պետք է ծալե-  
նրան սրանկյուն կամ կիսել և չորացնել նրա ծաղկած գաղաթը և տե-  
րեների բոլոր ձևերը ըստ հնարավորության ցողունի մասերով,  
վորոնց վրա նրանք նստած են։

Յեթե բույսը թղթից ավելի շատ մեծ է, որինակ, յեթե  
չորացնում ենք ծառակերպ բուսականություն, պետք է առան-  
ձին չորացնել ծաղիկներով ճյուղը, տերեներով ճյուղը, ծառի ծիլը  
և այլն։ Յեթե բույսը զանազան բարձրության վրա ունի զանա-  
զան տերեններ, պետք է չորացնել նրա ծաղկած գաղաթը և տե-  
րեների բոլոր ձևերը ըստ հնարավորության ցողունի մասերով,  
վորոնց վրա նրանք նստած են։

Խիտ տերեավորված և բազմաթիվ կողքի ճյուղերով կամ  
ծաղիկներով պատած բույսերը չորացնելիս պետք է նրանց մի  
մասը կտրել։ Այդ դեպքում պետք է թողնել տերենի կոթը, վոր-  
պեսզի պարզ յերեան կտրված բույսի մասերի ամրացման տե-  
ղերը։ Յեթե կտրելուց հետո ել բույսը ուղղելիս դեռ միքանի  
տերեներ իրարու կամ ճյուղի վրա են ընկնում, պետք է մեջերը  
ծծողական թուղթ դնել։ Բույսի հաստ մասերը պետք է չորա-  
ցնելիս ըստ երկարության կտրել։ Յեթե բույսի կտրած գործա-  
րանը շատ հաստ է, կարելի յե միջին կողմից նյութի մի մասը  
դուրս տալ, և, վորպեսզի բույսը սեղմելիս այդ գործարանը այն-  
քան ել տափակ ձև չընդունի, դուրս տված հյուսվածքի փոխա-  
րեն կտրելի յե մի կտոր վոլորած բամբակ դնել։

Առաջին ամպ բույսերի հյուսվածքները չփթան, պետք է չորացնելուց առաջ բույսը 1—2 բուդեյով խորասուղել յիռացող ջրի մեջ, ավելի լավ—բորակաթթվութիւնի<sup>1)</sup>:

Եատ հաստ և մասւտ բույսերը կամ նրանց մասերը չորացնելիս բոլորովին կորցնում են իրենց բնական տեսքը. այդպիսիները կարիք չկա չորացնելու, այլ պահելու համար հարկավոր և տեղավորել նրանց պահպանող հեղուկներում<sup>2)</sup>:

Թղթի վրա դարսութած բոլոր բույսերը պետք է դնել միմյանց վրա և տեղավորել մամուլի տակ: Իրրե մամուլ կարող է ծառայել տախտակ կամ ձեռնապայուսակ, վրայից մի վորեկ ծանրություն դրած: Ծանրությունը չպետք է շատ մեծ լինի, վորովհետև հակառակ դեպքում բույսերը կճխվին և կ'եռոցնեն իրենց բնական տեսքը: Ավելի լավ և շուտ են չորանում բույսերը բուսաբանական հատուկ մամուլի տակ (մոռմեսուերյան մամուլ): Բուսաբանական մամուլը բաղկացած է յերկու փայտայա կամ յերկությա շրջանակներից, վորոնց վրա ձղված են մետաղյա ցանցեր: Շրջանակները միացած են փոկերով<sup>3)</sup>: Ծծողական թուղթը բույսերի հետ պետք է մտցնել շրջանակների մեջ և ամուր ձգել փոկերը: Դրանից հետո մամուլը կարելի յե դնել շոր տեղ կամ կախել վառարանի մոտ: Դա շատ ձեռնուռ յե, վորովհետև դրած կամ կախած մամուլը թափանցիկ է ամեն կողմից ողի համար: Բույսերը նրա մեջ շուտ են չորանում և չեն հոտում: Առաջին տեսակի մամուլի տակ յեղած բույսերը նամությունից հաճախ հոտում, սկզբում կամ խավարում են, առհասարակ իրենց բնական տեսքը փոխում են: Բույսերը հոտելուց պաշտպանելու համար, չորացնելու ժամանակ, հարկավոր է նրանց տեղափոխել չոր թղթի մեջ: Բույսերը մամուլի տակ դնելուց մի որ, կամ ավելի լավ է 12 ժամ հետո, հարկավոր է հանել և նորից թուղթը փոխել, չոր թղթի մեջ դնել բույսերը, նախուին թաց թուղթը կարելի յե չորացնել և նորից գործ ածել: Մեկ կամ յերկու որից հետո բույսերը նորից պետք է հանել մամուլի տակից և թուղթը փոխել: Թուղթի ամեն որ փոխելը պետք է կրկնել, մինչև վոր բույսերը բոլորովին չորանան: Չորացած բույսը թղթից յիթե բարձրացնենք, չպիտի կախընենի: Որ և բարակ բույսերը հաստ և մասւտներից շուտ են շորանում, և այդպիսիները ավելի շուտ պետք է հանել մամուլի

1) Բորնայ բալոտա.

2) Консервирующие жидкости.

3) Եղթիսի մամուլները կարելի են փոխարինել յերկու ծակծկառած տախտակներով: Առքան շատ լինեն ծակերը, այնքան լավ:

տակից, իսկույն ևեթ, յերբ վոր չորանոն։ Միջին հաստության բույսերը բուսաբանական մամուլի տակ չորանում են 4—5 որում։ այդ ժամանակամիջոցում բավական և փոխել թուղթը 2—3 անգամ։ Հասարակ մամուլի տակ, այսինքն տախտակի տակ, նույն բույսերը չորացնելու համար հարկավոր և առնվազն 7—8 որ, և 4—5 անգամ թուղթը պետք է փոխել։

Բազմաթիվ և առհասարակ միմյանց վրա կռւտակված պատկանի թիկներով ծաղիկների չորացնելը պահանջնում է առանձին խնամք։ Կորպիսղի այզպիսի ծաղիկները չորացնելիս չհռահն, նրանց պատկանի թիկների մեջ պետք է ծծողական թղթի կտորներ պնդել և, մամուլի թուղթով փոխելիս, այդ ծծողական թղթի կտորներն ել փոխել։

Դեղին և նորն ջաղույն ծաղիկները լավ են պահպանում իրենց գույներ, Մյուս ծաղիկները, վորոնց գույնը զլիավորապես կախված է անտոցիան պիզմինուից, առհասարակ քիչ թե շատ կորցնում կամ փոխում են իրենց գույնը։ Առանձնապես դժվար է պահպանել յերկնազույն և կապույտ ծաղիկների գույնը։ Ծաղիկների գույնը պահպանելու համար առաջարկված են զանազան միջոցներ։ Նիկոնովը առաջարկում է տմենապարզ և դյուրին միջոցը։ Բույսը խորասուզել միքանի բողեյով բորակաթթվուտի տաք (շատ բույսերի համար ավելի լավ և յեռացող) լուծվածքի մեջ։ Յեռացող լուծվածքի մեջ նազուկ բույսերը խորասուզելիս, նրանց հետ պետք է ընկղմել ապակու թերթիկի և այդ բույսերը դուրս հանել ապակու թերթիկի վրա։ Հետո զղուշությամբ չարացնել ծծողական թուղթի միջոցով և շարունակել չարացնելը սովորական ձեռվ։

Ասեղնատերեվ բույսերը չորացնելի և նրանց ասեղները, առհասարակ, թափվում են, նաև անսպասնոր յեղենիների վորպեսղի ճյուղը ասեղների թափելուց պաշտպանութեար, պետք է չորացնելուց առաջ այդ ճյուղը մի 5 բողեյավ խորասուզել սոսինձ լուծած տաք ջրի մեջ։ Զրեց հանելով և թոթափելով, պետք է ճյուղը չորացնել առաջ ողի մեջ և հետո սովորական ձեռվ—հերթաբիումի համար։

Դիմադիր սաւների չորացնելը շատ դժվար է։ Առհասարակ սունկերը իրենց տեսքը շատ են փոխում և այդ պատճառով ավելի լավ և նրանց պահել պահպանող հեղուկների մեջ, բայց այդ դիմքում անհրաժեշտ է ունենալ ապակյա սրվակներ հեղուկով և հարմարություն սրվակների դասավորման համար։

Մոռատ սունկերը չորացնելու համար պետք է սունկի գըլ-խորկը բաժանել կոճղից։ Հետո զլիարկը և կոճղը կիսել, բոլոր

միջին հյուսվածքը դուրս հանել, թողնելով միայն նուրբ մակերևութային շերտը և հետո սովորական ձեռվ չորացնել: Չորացրած գլխարկը և կոճղը սոսինձուվ այնպիս պետք է կպցնել միմյանց, վոր ամբողջ սունկի տեսք ունենան: Բացի մակերեսութային կտրվածքից, ցանկալի յե չորացնել նայե սունկի բարակ շերտը, կտրած մեջտեղից ըստ երկարության: Դրա համար հարկավոր է սունկը կիսել ըստ երկարության, զուգահեռական կերպով կտրել մի բարակ շերտ և չորացնել սովորական միջոցով: Սովորական ձեռվ չորացնելիս սունկերը սեղմվում են, և նրանց դժագրությունները փոխվում են: Դրանից խուսափել կարելի յե հետեւյալ կերպով: սունկի մի բարակ շերտ պատրաստել, դնել թանձր թղթի վրա, մատիտով սունկի ուրվագիծը խաղել և խազած տեղը սոսինձով ծածկել, հետո սոսինձոտ տեղի վրա կպցնել սունկի կտրվածքը և մամուլի տակ չորացնել սովորական միջոցով: Յերբ վոր սունկը կչորանա, կտրել թղթից և կպցնել հերբարիումի մեջ:

Չորացրած սունկի հետ անհրաժեշտ է ունենալ նայե նրա սպորները: Վորպեսզի ստացվին գլխաղիր սունկերի սպորները, պետք և սունկիցը անջատել գլխարկը և դնել թղթի վրա (յեթե սպորները գունավոր են—սպիտակ թուղթի վրա, իսկ յեթե սպորները սպիտակ են—ոհ թղթի վրա), ծածկել գլխարկը բաժակով և այդպես թողնել մի քանի ժամ: Սպորները կուրս կթափիվն: Հետո պետք է թուղթը ծածկել մածուցիկ նյութով: Դրա համար կան զանազան միջոցներ: Ամենահասարակ և դյուրին միջոցը հետևյալն է: սոսինձը լուծել ջրի մեջ և զգուշությամբ մասր ցանցի միջից փափուկ վրձինով սրսկել սպորների վրա: յերբ վոր թուղթը չորանա—սպորները կպած կլինեն նրան, և թուղթը կարելի յե կտրել ու միացնել հերբարիումի սունկի մյուս մասերին:

### ՀԵՐԲԱՐԻՈՒՄ ԿՈԶՄԵԼԻ.

Յերբ բույսերը բոլորովին չորանան, կարելի յե նրանցից հերբարիում կազմել, այսինքն չորացնող թղթերի միջից բույսերը տեղափոխել նոր թղթերի մեջ: Հերբարիումի համար գործ են ածում զանազան տեսակի թղթեր. կարելի յե նմանապես գործ ածել և այն, վորի մեջ բույսերը չորացվել են, կամ սովորական պրելու թուղթ: Վորքան ստվար լինի թուղթը, այնքան բույսերը լավ կերեան նրա մեջ և այնքան հերբարիումը դիմացկուն կլինի:

Հերբարիում կազմելու ամենահեշտ միջոցն է — չոր բույսերը


դնել հերբարիումի թղթի թերթերի մեջ և վրան համապատասխան մակագրություն անել։ Այդ ամենահեշտ միջոցը դորժադրովում ե այն դեպքերում, յերբ մեծ քանակությամբ բույսեր պիտի չորացնել, և յերբ հետագայում հերբարիումով ոգտվելու հաճախ կարիք չի լինի։ Այդպիսի հերբարիումները տեղափոխելիս և հաճախ նայելիս բույսերը նրանց մեջ շփվում են, կատրատվում ե ցած թափվում, այդ պատճառով հաճախ ոգտվելու համար այդպիսի հերբարիումները անհարմար են, վորովեսզի բույսերը հերբարիումից չթափվեն. կարելի յե նրանց միացնել հերբարիումի թղթին։

Բույսերը հերբարիումի թղթին միացնել կարելի յե մանր թղթի կտորներով։ Այդ կտորները պետք ե միքանի տեղերում դնել բույսի վրա և ծացրերը սոսինձով կպցնել հերբարիումի թղթին։ Այդ կերպով ամրացրած բույսերը շատ հեշտությամբ կարիք յեղած դեպքում կարելի յե տեղափոխել մի թղթից մյուս թուղթը հարկավոր ե միայն պոկել թղթի մանր կտորները և բույսը կոգատվի։

Բայց յեթե հերբարիումից պետք ե լինում ոգտվել հաճախ, այդ դեպքում այդպիսի ամրացման միջոցը այնքան ել հաստատուն չե. բացելով և ծածկելով հերբարիումը, բույսերի մասերը բարձրանում են և կարող են կոտրվել։

Այն հերբարիումները, վորոնցից պետք ե լինում հաճախ ոգտվել (որինակ, զանազան ուսումնաբանական ձեւախոսական և կենսաբանական հերբարիումները), անհրաժեշտ ե կազմել ամրող բույսը սոսինձով միացնելով հերբարիումի թղթին։ Ամրող չորացրած բույսը հերբարիումի թղթին միացնելու համար՝ անհրաժեշտ ե զգուշությամբ բույսին սոսինձ քսել, բայց վոչ թե մինչենք նրա յեղերքները։ Հետո պետք ե սոսնձու կողմով դնել հերբարիումի թղթի վրա, ծածկել փափուկ թղթով և զգուշությամբ սեղմել ձեռքով ու հարթել։ Միայն ծաղկի նուրբ պսակաթերթիկները ավելի հարմար ե թղթի կտորներով կպցնել, և վոչ թե սոսինձ քսել նրանց, իսկ թղթի կտորները պետք ե ամրողովին սոսնձուտել. և վոչ թե միայն ծայրերը։

Ամեն մի բույս, վոր զետեղված ե հերբարիումի մեջ, պետք ե ունենա համապատասխան մակագրություն, Այդ մակագրության մեջ պետք ե նշանակված լինի բույսի տեղը, վորտեղից նա գըտնվել ե (գտվառի, քաղաքի, զյուղի և այլն անունը)։ Բույսի կենսատեղը, այսինքն անտառում, դաշտում, ճահճում, թե այլ տեղում ե գտնված բույսը։ Ինչ ժամանակ ե գտնված բույսը (տարի, ամիս, թիվ) և յեթե բույսի զանազան մասերը (որինակ, ծաղիկն ու պը-



առողը) վերցված են զանազան ժամանակներում, պետք է նշանակի, թե վոր մասը յերբ է վերցված:

Տույսի գիտական (լատիներեն) և, յեթե հայտնի յե, տեղական ժողովրդական անունը:

Յանկալի կլիներ մակաղրության վրա ավելացնել հոգի բնությունը, մակերեսութիւնը (տափարտկ և, թե բլրոյն), լանջի ուղղությունը, և, յեթե բույսը աճել է լանջի վրավագությումը լանջի վրա (հյուսիսային, հարավային), և վերջապես, թե վորքան հաճախ է պատահում այդ բույսը:

Կանվելու հաճախությունը՝ նշանակելու համար կարելի յե ոգովի և հետեւյալ նշաններով. մեծ, համարյա անընդհատ խմբերով պատահող բույսերը — ։, հաճախ բայց վոչ անընդհատ խմբերով պատահող բույսերը — ։, մեկ-մեկ պատահող բույսերը — ։.

Յեթե հերբարիումը հավաքված է հատուկ նպատակով, հարկավոր և համապատասխան մակաղրություն անել, որինակ, կենսաբանական հերբարիումի վրա. Հուր պահելու հարմարված բույսեր, միջատներ վորսացաղ և այլն:

Յեթե միենույն պեղում հավաքված են շատ բույսեր, կորելի յե առաջին մակաղրությունը անել բոլոր բույսերի վրա մեկ անգամ մի առանձին թղթի վրա. Վորի մեջ և պետք են բոլոր բույսերը: Եթան այդպիս կարելի յե անել և յերկրորդ մակաղրությունը. մեկ անգամ ձևավորության բոլոր բույսերի համար այն դե քում, յորը բույսերը հավաքվում են ըստ ձևավորումների:

~~Հերբարիումի ամենից հարմար և բոլոր կողմերից փակվող փակումը պայմանակիներում կամ տափակ տուփերում ու արկղներում:~~ Յեթե տուփերը կամ արկղները շինվում են հատուկ հերբարիումի համար, հարեւավոր և շինել այնպիս, վոր տանիքը բացվի արկղի կամ տուփի լայն կողմից և յերկոր կողքից (աջից): Այլապիս հերբարիումը շատ դժվար է նայել — խոր տուփերից հերբարիումը հանելիս բույսերը կոտրատվում են:

Ամենից լավ և պայմանակիները պահել կանգնեցնելով ուղղահայաց և վոչ թե դարսելով մեկմեկու վրա, վոր ծանրությունից չոք բույսերը կոտրատվին: Հերբարիումը պետք է չոք տեղ պահել:

Հերբարիումը պահանձար միջատներից պահպանելու համար

կան զանազան միջոցներ. ամենահասարակ միջոցը — հերբարիումի թերթերի վրա նավթալին կամ մի ուրիշ ախտահանող նյութ ցանելն է:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գր.



FL0002746

